ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2023 թվականի N 913 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1564-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանի Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցապատման գործընթացը կանոնակարգելու և կամրջի նախագծանախահաշվային փաստաթղթերի հատուկ համալիր փորձաքննություն իրականացնող միջգերատեսչական ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով ստեղծելու ու դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 1564-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) վերնագիրը «ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ » բառից հետո լրացնել «ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» բառերով.

2) նախաբանը «5-րդ ենթակետի» բառերից հետո լրացնել «, 140-րդ կետի» բառերով.

3) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով՝

«6) մինչև սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված համատեղ հանձնաժողովի կողմից կամրջի շահագործման ընդունումը՝ կամրջի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հատվածն ընդունում է սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով ստեղծված ընդունող հանձնաժողովը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ:»:

4) 2-րդ կետի 1-ին ենթակետը «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «1)» բառով, իսկ հավելված բառից առաջ, ինչպես նաև որոշմամբ հաստատված հավելվածի վերջևի աջ անկյունում՝ «N 1» բառով.

5) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ ենթակետով՝

«2) Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա կառուցվող նոր կամրջի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հատվածն ընդունող հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:».

6) լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

08.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ